

պետ», եւ կ'ըսէ թէ այս վարդան վարդապետը կրնայ ըլլալ միայն «Վարդան Արեւելցի», եւ ոչ ուրիշ մը», ինչ որ մեղի եւս շատ հաւանական կը թուի:

Սակայն Պր. Հայկ Պէրպէրեանի աշխատութեան բուն արժէքը կը կայանայ, ինչպէս ինք եւս կ'ըսէ «կարճ եւ ընդարձակ խմբագրութեանց անջատումին մէջ, որով մօտաւորապէս կը ճշտուի նաեւ ըսկըրնագրին բովանդակութիւնը» (էջ 28). եւ հոսակ կու տայ ամփոփումը ամբողջ իր ներածութեան, ղեկըղ նախ անոր իբրեւ հեղինակ վարդան Արեւելցին (մեռած 1269ին), որ է մեր վարդան պատմադիրը, եւ մեկնելը, հակառակ Սէն Մարթէնի հրատարակութեան վրայ հիմնուած կարգ մը հինցած կարծիքներուն:

Հոսակ Պր. Պէրպէրեան իր աշխատութիւնը շատ իրաւացի կերպով կը համարէ «նպատակ մը քննական վերջնական հրատարակութեան մը»:

Մենք Պր. Հայկ Պէրպէրեանի քննական այս աշխատութիւնը աչքէ անցնելէ վերջ, կրնանք ըսել թէ, բաւական ծանր եւ դժուարին աշխատութիւն մը եղած է այն: Պր. Հայկ Պէրպէրեան իր առջեւ ունեցեր է, ինչպէս ըսինք, 24 ձեռագիր, զանազան գրութեամբ, զանազան անձերէ խմբագրուած, եւ զանազան դարերու մէջ. եւ ինք յաջողեր է խղճամօրէն, դիր առ դիր, վանկ առ վանկ, տող առ տող քննել եւ

բաղդատել, եւ անոնց ստորեւ մի առ մի նշանակեր է անոնց տարբերակները, ուսկից յստակ կ'երեւին ձեռագիրներու մէջ եղած վերջին յաւելումները: Այս քրտնաշան դործով, Պր. Պէրպէրեան կըցած է ուղի մը բանալ, եւ դիւրացնել բանասէրներուն դժուարին դործը, վերջնական լուծում մը տալու համար, վարդան վարդապետին այս «Գորդեան հանդոյցին»:

Ստուգիւ Պր. Հայկ Պէրպէրեան օգտակար նպատակ մը կը բերէ իր այս քննական հրատարակութեամբ, հայ գրականութեան, հայ պատմութեան, եւ ամէնէն աւելի հայ տեղագրութեան, որմէ մենք եւս օգտուելու առիթը ունեցանք, մեր «Հայաստանի բերդերը» աշխատութեան ընթացքին:

Մենք կը շնորհաւորենք պատուական հրատարակիչը, եւ բարերարները հրատարակութեան, որ նիւթապէս օժանդակեր են, այս օգտակար դործին լոյս տեսնելուն. երանի՜ թէ ուրիշ օգտակար հրատարակութիւններ եւս վայելէին նման Մեկնասաներու հովանաւորութիւնը:

Կը մաղթենք որ Պր. Հայկ Պէրպէրեան շարունակէ իր այս օգտակար քննական հրատարակութիւններու շարքը, եւ լոյս ընծայէ նաեւ մեր մատենագրութեան մէջ ծածկուած ուրիշ զանձեր եւս:

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԻՆՉՊԵՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Գ Ր Ե Յ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿԷՆ ՊԱԹՈՒՄ

Շողեկառքը կտրեց իտալական սահմանը եւ մտաւ Եւրոպայի. 1960ի Օգոստոս հինգն էր:

Բնութիւնը կը շարունակէր իր լեռնային տեսարանները. ծառերը, անասունները չէին փոխուեր. բայց մարդիկ չէին նմաներ իտալացիներուն, լեզուն անհասկանալի դարձաւ, եւ ես մնացի մինակ, նստած օթեակին մէջ: Արտասահմանէն միակ ճամբորդն էի. այս կողմերը օտարական քիչ կը տեսնուէ: Անցադիրս քննեցին, կնքեցին, երեսո նայեցան եւ ինծի յանձնեցին: Ես պէտք էի անցնիլ սահմանէ սահման, այդ խայտարղէտ երկրին մէջէն: Խրուաթն ու Սլովէնը Սերպին առնուր չէին ուղեր լսել, բայց մէկ դրօշակ ունին եւ մէկ Թիթոյ: Զակրէպ, Լուպիանա գեղեցիկ քաղաքներ էին. Սերպիական մասը թրքական արեւելք կը հոտէր: Եւրոպայի իր համայնավարութեան մէջ շատ պաղ ջուր խառնած էր. միայն դրօշակին վրայ մնացեր էր մուրճ մանգաղը:

Մտանք Պուլղարիա, փոքրիկ կայարանը ծեփուած էր կարմիր լաթերով եւ դրօշակներով. Լենինի եւ Կիորկի Տիմիթրովի հսկայ նկարները բռնած էին չէնքին ճակատը: Ստալին աքսորուած էր: Շողեկառքի տօնը կը կատարէին:

Առաջին համայնավար ուղղափառ երկիրն էր որ կը մտնէի: Անշօշափելի ճընշող մթնոլորտ մը կար, եւ կարծես խոր լուծիւն մը պատած էր երկրին վրայ:

Բազմութիւն կար, բայց խօսող չկար, իտալական կայարաններու գունագեղ աղմուկը չէր լսուեր: Ասիկա օտարականի մը առաջին տպաւորութիւնն էր: Երկիրը երկիր է, մարդիկը՝ մարդիկ, որոնք քեզի կը նային եւ կարծես չեն ուղեր տեսնել:

Սոփիան գեղեցիկ քաղաք է, տարածուած՝ բլուրներու ծոցին մէջ: Շրջականերու քանի մը հին բերդեր հերոսական դարերէն մնացեր էին: Քաղաքին կեդրոնը մահմետական մզկիթ մը յամառօրէն կը դիմադրէր յեղափոխական յարձակումներուն: Իրենք ալ ունէին Ինքուրիստ եւ Ունիվերսալ: Սոփիան եւ բնակիչները պետութեան կը պատկանին, պետութիւնն ալ Մոսկովներուն կը պատկանի:

Երեկոյան շողեկառք պէտք էի առնել՝ վառնա մեկնելու համար: Հաղիւ ոտքերս կըցայ ներս դնել եւ դուրսս ներս քաշել. սաստիկ խճողուած էր. մանաւանդ խոշոր ծրարներ, պայուսակներ, չուաններով կապուած, տեղ գրաւելու առաջնութիւն ունէին:

Պուլղարները վառնան Սեւ ծովի մարգրիտը կը կոչեն, ասիւրը Ոսկի աւազ. բայց Ռումէնները կ'ըսեն թէ Քոստանցան է Սեւ ծովին մարգրիտը:

Ռուսական Ֆելիքս Զերգիմսկի շողենաւը կանգնած էր նաւահանգստին մէջ, ուրիշ օտար նաւեր չկային: Այդ նաւով պէտք էի Օսեսա մեկնիլ: Նաւահանգստին բեռնակիրները մահմետական էին, մաքսապետը՝ պուլղար, ճամբորդները՝ հայեր:

— Ձեր պայուսակները չեմ նայիր, ըստ մաքսապետը՝ թարգմանի միջոցով, բայց երկու տուր ավտո է վճարեք:

Պուլլարիային քանի մը հայ մամիկներ ալ չողենաւ պիտի առնէին՝ Հայաստան երթալու համար: Իրենց հաստափոր պող-ջանքը, անհամար փողերիկ կապոցներ, պաստրմայ, սոււնուխ եւ զանազան իրեր ու տաքնապալից աղմուկը ցոյց կու տային հեռաւոր եւ անծանօթ ճամբորդութեան մը վախը. բայց Հայաստան պիտի երթային՝ իրենց սիրելիները տեսնելու:

Բարձրացանք շողենաւ: Ճերզինսկին նոր նաւ էր, մաքուր եւ զեղեցիկ, սերի գոյնով ներկուած: Կարմիր դրօշակը դեղին մուրճ մանդալով կը ծածանէր ամառնային օդին մէջ:

Սեւ ծովը հանդարտ էր, եւ նոր արեւին տակ ցոլքեր կու տար եւ ցոլքեր կ'առնէր: Եղանակը տաք էր: Ծոգենաւին վըրայ գտանք Սիւրիայէն, Լիբանանէն, Յունաստանէն եւ այլ երկիրներէ ճամբորդող հայեր. ասոնք ալ Հայաստան կ'երթային: Հայերս 64 հոգի եղանք. կային տուն վերադարձող քանի մը ուսուցիչ. բայց շողենաւին պաշտօնէութիւնը շատ աւելի էր, թերեւս քանի մը անգամ: Օրիորդ մը հաւաքեց մեր անցագիրները. խիստ քննութեան պիտի ենթարկուէին: Օրիորդը Ախալքալաքցի հայ էր, բայց հայերէն չէր գիտեր:

Ծոգենաւի լեզուն այլեւս ուսուցէն էր. մեզմէ ոչ ոք կը հասկնար այդ լեզուն. հարկ եղաւ Փրանսերէն, անգլիերէն, եւ թուրքերէն լեզուները օգնութեան կանչել: Ծուռով սորվեցանք պոքժ (ուսուկան կաղամբէ ապուր), խառաշոյ (լաւ) բառերը:

Ընթրիքին ծառայելու եկան քանի մը օրիորդներ, ճերմակ գոգնոցով, դուլսնին ճերմակ պսակ կապած, ցոյց տուին ճաշացանկը: Բան չհասկցանք. բոլորս միասին պոքժ պուռացինք: Մնացած կերակուրներն իրենց ուզածը բերին:

Ուշ երեկոյ հասանք Քոստանցա: Քաղաքը տօնի մէջ էր. բնակչութիւնը ծովափ խուժած էր. հրախաղութիւն կար.

ծովային ոյժերու տօնը կը կատարէին: Քոստանցա զեղեցիկ քաղաք էր, սպիտակ տուններով եւ աղքատ խանութներով: Ուղիքիս աքսորուած, կ'ողբար իր հեռաւոր ու զեղեցիկ Իտալիան:

Ի՞նչ անգութ եղած է Օգոստոս կայսրը, այս ամերուն վրայ նետելու այդքան զգայուն, վիպապաշտ եւ հանճարեղ բանաստեղծ մը:

Տեղական ճայնասփիւռը ուսմաներէն, մոլորակներէն երգեր կը նուագէր: Խաղաւանք (քաղինոյ) կը ծփար մութ ջուրերու մէջ՝ իր սպիտակ որմերով, եւ կամարներուն տակ մարդիկ նստած՝ լիմոնաջուր կամ գարեջուր կը խմէին:

Մենք խումբ խումբ նետուեցանք ներքին փողոցները, ահանջ դրինք հայերէն բառեր յափշտակելու համար: Կ'ըսեն թէ Քոստանցա 5.000 հայ ունի. բայց հինգ հայու չհանդիպեցանք. թերեւս ուսմաներէն կը խօսէին:

— Լուսանկարիչներն անպայման հայեր են, աշխարհի մէջ լաւագոյն պատկերահանը հայն է, ըսի ես, եւ խկապէս հայ լուսանկարիչ մը գտանք, թրքահայ էր: Այստեղ հայեր չկան, հարցուցինք:

— Կան, ի՞նչպէս չէ, քանի մը հազար հայ կայ, պատասխանեց մարդը:

Տիկին մը միայն լսեց մեր լեզուն եւ զանալով հարցուց.

— Դուք հայե՞ր էք:

— Այո՛, հայեր ենք, խումբով պատասխանեցինք, Հայաստան կը մեկնինք:

— Կ'ըսեն թէ շատ զեղեցիկացած երկիր է, ըսաւ կինը: Յետոյ զանալով կրկնեց. ամուսինս ուսմէն է, մանչուկս հայերէն գիտէ: Եօ՛րկի, բարեւ տուր, ասոնք հայեր են, ըսաւ տղուն:

Ամէն տեղ հայուն սիրտը հայ կը փընտէ: Քանինէ՛ր օտար քաղաք մը հասնելով, իսկոյն հեռախօսի ցանկը կ'առնեն եւ Եան կը փնտռեն:

Քոստանցա 5.000ի չափ հայ ունի, բայց իր հայկական դպրոցը փակեր են. Պուլլարէ՛ի հայկական դպրոցը կիսով ուսմէն տղաներ խուժեւ են, նախակրթարանի առաջին երեք դասարանները հայ պա-

հելով: Ռումանիա համայնավար է, կը պայքարի ցեղային ճնշումներու դէմ. աղատութիւն եւ եղբայրութիւն կը քարոզէ. բայց հայոց դպրոցները փակ են: Փրոֆ. Եօրկան իսկ պիտի ըմբոստանար:

Յաջորդ օրը երեկոյեան ժամը 5ին մենք Օտեսոս պիտի հասնէինք: Հայ մամիկները տաքնապի եւ շփոթութեան մէջ էին. մաքսատունէն պիտի անցնէին: Ա՛խ, այդ մաքսատունը, ի՞նչ ատելի հաստատութիւն է: Ծոգենաւին մէջ բաժնեցին յայտարարողներ. հարկ էր լեցնել եւ յայտարարել՝ դրամ, ոսկեղէն, արծաթեղէն: Հայ ճամբորդներուն շփոթութիւնն աւելի սաստկացաւ:

— Աս թուղթն ի՞նչ է, հարցուց ինձ տիկին մը, փաստօրէն է Հայաստան մըտնելու:

— Ո՛չ, մայրիկ, պէտք է վրան դրես՝ թէ ի՞նչ ունիս, ի՞նչ կը տանիս Հայաստան:

— Իրենց ի՞նչ, կ'ըսէին մայրիկները. քրոջս, տղուս, թոռանս հագուելիք կը տանիմ: Գրպաննիս, վրանիս ալ կը նային եղեր. Աստուած իմ, աս ի՞նչ օրերու հասանք, կը կրկնէին մայրիկները:

Թուղթերը հարկ էր լեցնել ուսուցէն, անգլիերէն, Փրանսերէն կամ գերմաներէն: Խեղճ պառաւներն ի՞նչ դիտնային այդ լեզուները:

— Հայերէն չ'ըլլար, հարցուցին ինձ, ինչո՞ւ, ան ալ քրիստոնեայ լեզու չէ՞:

— Աղամ դրախտին մէջ Հայերէն չիսօսեցա՞ւ, ինչո՞ւ հայերէն չ'ըլլար, կը վիճէին իրարու հետ:

— Ես Հայաստան պիտի երթամ, Ռուսերը ի՞նչ դործ ունին իմ աղբանքներուս հետ, Ռուսերը թող իրենց տեղը նստին, ասոնց լաթ մ'ալ չեմ տար, կ'ըսէր մայրիկ մը. եթէ պիտի տամ՝ Հայաստանի կու տամ:

Մայրիկն հաղիւ համոզուեցաւ թէ Հայաստանը Մոսկովներու սրտին շատ մօտիկ է:

Հարկ եղաւ որ ես լեցնեմ դրեթէ բոլոր անոնց թուղթերը. պատրաստ էինք դիմադրաւելու գալիք վտանգին: Օտեսոս-

յէն երկու ժամ առաջ, բաւական խոշոր շողենաւ մը ճերզինսկին մէջ թափեց պաշտօնեաներու բաղմութիւն մը:

— Քա՛, քոյրիկ, բացականչեց պառաւ մը, ամէն մէկուս՝ մէկ հատ նայող կու գայ: Արդեօք դրպա՞նս ալ պիտի նային:

— Չէ՛, մայրիկ, ասոնց մէջ ամէն տեսակ պաշտօնեայ կայ, բժիշկ, նաւաստի, ոստիկան, պատասխանեց ճամբորդ մը, որ ծանօթ էր ծովային երթեւեկի:

Ծոգենաւին ճայնասփիւռը ուսուցէն, անգլիերէն, գերմաներէն եւ Փրանսերէն լեզուներով յայտարարեց ճամբորդներուն՝ պայուսակները բանալ, քննութեան համար: Սպասուհիները նշաններով հասկըցուցին հրահանգները: Հիմա ո՞վ պիտի քակէր այդ ծանր պողջանքը. ի՞նչ խնամքով կապած, տեղաւորած էին՝ քոյրիկներու, թոռներու, զաւակներու նուէրները:

— Կ'ըսեն թէ Հայաստան շատ ցուրտ կ'ընէ, ըսաւ մայրիկ մը, քանի մը բուրդէ հագուելիք առի, որ տղաքս չմսին:

Իմ օթեակիս մէջ երեք հոգի էինք. այդ մարդ մը, ուսու փոփ մը (քահանայ) երկար մազերը ծոծրակին հանգուցած եւ խոշոր խաչ մը վզէն կախ: Ներս մտան երկու մաքսային պաշտօնեաներ, մին ուսու էր եւ միւսը թաթար: Թաթարը թուրքերէն կը խօսէր. մայրիկները կը հասկնային այդ լեզուն. կրնային լեզու թափել՝ համոզել թէ թոռներուն, հարսին ու տղուն հագուելիք կը տանէին: Պաշտօնեաները այնքան խիստ չեղան. ուսու շատ աղնիւ էր. հաղիւ թուղթս տեսաւ՝ խառաշոյ ըսաւ ու գնաց: Թաթարը ընտանիք ունէր. մարդ մարդով կ'ապրի. ժամացոյց մը, բրդեղէն մը դէ՛ չէր ըլլար. եւ կրցաւ օգտուել եւ աչքերը դոցել:

Մաքսային քննութիւնը վերջացաւ եւ մայրիկները խոշոր շողենաւ մ'առին. կապոցները ծրարեցին եւ Օտեսոսն տեսնուեցաւ հորիզոնին վրայ: Սեւ ծովի թագուհին է, իբր առեւտրական եւ ազնուական քաղաք: Մօտեցանք քաղաքին եւ Ինքսարիստի ինքնաշարժները մեզ առաջնորդեցին պանդոկ: Օտեսոսն տակաւին

կը պահէր իր կայսերական դրոշմը. երկ-
զլխանի արծիւներուն տեղ՝ մուրճ ման-
դաղը դրուած էր պետական շէնքերու ճա-
կատին: Լենին՝ պատերուն եւ հրապա-
րակներուն վրայ բազմապատկուեց էր,
բայց Ստալին չէր սիրուած այս քաղա-
քին մէջ: Ինձ այնպէս թուեցաւ՝ կարծես
եօթանասնամեայ պառաւ թագուհի մ'ը-
լար, որ իր պարտքը պալատներով, ի-
տալական դասական ոճով շինուած, դեռ
կը յամառէր ժամանակի փոփոխութիւն-
ներու դէմ պայքարել:

Պէտք էինք ինթուրիստի շէնքն երթալ.
այլեւս իր իշխանութեան տակն էինք: Օ-
րական 16 տուար վճարած էինք արտա-
սահմանի մէջ՝ պառկելու եւ ուտելու հա-
մար. պտոյտները եւ ճամբորդութիւննե-
րը մեր վրայ էին: Հրահանգներ ստա-
ցանք, քիչ մը տուար փոխեցինք, մէկ տո-
ւարը 10 բուլլիի, ինթուրիստի սակն էր:
Բայց այդ դիւեր մենք չողենաւին մէջ ան-
ցուցինք. պանդոկը բերնէ բերան լեցուն
էր, նոյնիսկ սրահներու մէջ պառկողներ
կային:

Յաջորդ օրը, ճաշէն յետոյ, ամէն ոք
պէտք էր իր ճամբան բռնէր: Օգը տաք
էր, ծարաւը խեղդիչ, ճաշարանը ջուր
չէր տար, փակ էր:

— Գացէ՛ք, փողոցի ջուրէն խմեցէ՛ք,
ըսաւ ճաշարանապետը. բայց պանդոկի
վարիչը իւրոտ հայտնաւորեց մը քաշեց եւ
ճաշարանը բանալ տուաւ՝ դաւաթ մը
ջուր տալու համար:

— Հայաստանի մէջ կը տեսնուինք, ը-
սինք իրարու: Ոմանք չողեկառքով, ո-
մանք սաւառնակով պիտի մեկնէին, ես
ընտրեցի Ատմիրալ Նախիմով չողենաւը՝
Պաթում մեկնելու համար: Հեղեղային
անձրեւ կու գար. նշանաւոր են Սեւ ծովի
անձրեւները: Նախիմով չողենաւը հըս-
կայ մ'էր, չուրջ 34.000 տակառաջափ ու-
նէր, լայնանիստ պառաւի մը կը նմանէր
եւ եօթը յարկով Նոյի տապանն էր կար-
ծես: Շողենաւը Օտեսոս — Պաթում գիծը
կ'ընէր: Ամառնային արձակուրդի շրջ-
անն էր. ամէն աշխատաւոր իր հանգիս-
տին կը փութար: Ասեղ ձգելու տեղ չը-

կար, արմուկ արմուկի էին. բայց ու-
րախ էին: Կային տիպարներ որ դնում-
ներով դրաղած էին. կային եւ զողեր ու
պարկեշտ մարդիկ: Օթեակները երկսեռ
էին: Ռուսերը ուրիշ մարդիկ են: Ման-
ուածապատ սանդուղներէն իջնել եւ օ-
թեակը դտնելը շատ կնճռոտ հարց էր,
առաջնորդի պէտք կար: Տեղացիները գոհ
եւ ուրախ էին. իրենց համար սովեթա-
կան աշխարհէն դուրս՝ ուրիշ կեանք չը-
կար. նշանակութիւն չունէր թէ ճաշելու
համար պէտք էր երկար պոչ բռնել. վար-
ժեր էին. եւ ճաշողին դիտուն սպասող
կար: Ռուսը աշխարհիս մըցանիչը կըր-
նայ կոտրել իր համբերութեամբ եւ հա-
մակերպութեամբ:

Սեւ ծովի՝ ռուսական ափերը հմայիչ
տեսարաններու երկար երկղ մ'են. այդ
աշխարհի Քոթ տ'Աղիւրն է. բայց ոչ ա-
մարանոցներու առատութեամբ, ինչպէս
Ֆրանսան եւ Իտալիան: Մենք եղբերեցինք
Խրիմը, Սերաստապոլը եւ ահա ծովա-
խորշի մը մէջ անուանի Եալթան. հին
պալատներու կողքին՝ նոր ամարանոցներ,
եւ հայկական եկեղեցի մը՝ քաղաքին վե-
րելը: Քիչոյ մը սալոր 5 բուլլիի դնեցի
(պետական սակով՝ մէկ տուար): Եկաւ
մեր առջեւ Նովորոսիսկը, աւելի մեծ քա-
ղաք մը, ուսկից իտալացի նաւեր քարիւղ
կը բառնային: Անափա, Սոչի տակաւին
Ուքրանիոյ մաս կը կազմեն: Երբ ռուս
նաւատարի մը ըսի թէ Սոչի վրացական
է, ուժով Նիքթ մը կոխեց:

— Զգո՛յ՛ք եղէք Կովկասցիներէն, մեզի
յանձնարարած էին Օտեսոսայի մէջ, անոնք
զողութիւն կ'ընեն:

Մայրիկներէն մին գոհ գնաց երկու ա-
նուշիկ հայ մանչուկներու, որոնք սիրով
օգնած էին իրեն՝ չողենաւ բարձրանալու
համար: Մայրիկի բացակայութեան յա-
ջողեր էին անոր օթեակը մտնել եւ պա-
յուսակներէն մէկ քանի հատը Եալթա ի-
ջեցնել: Բարեբախտաբար Երեւանցի աղ-
նիւ երիտասարդ մը փարատեց այդ վատ
տպաւորութիւնը:

Սոխումը ափսաղներու մայրաքաղաքն
է, բայց ափսաղ գրեթէ չկայ. Վրաստանի

հովանաւորութիւնը կը վայելէ. ափսաղը
գիւղերը կը բնակի: Ասոնց լեզուն Աստ-
ուած եւ իրենք միայն կը հասկնան: Տա-
ռերը լատինական են, բայց իրենք կար-
դալ չեն գիտեր:

Ափսաղները հին ժամանակ թաղաւո-
րութիւն ունէին եւ հայերու դէմ պատե-
րազմներ ալ ըրած՝ Կարսի շինութեան
ժամանակ. յետոյ Վրաստանի հետ սերա-
բանութիւն ըրին ու միացան անոնց: ԺՆ
դարուն մահմետական դարձան՝ Օսման-
ցիներու սիրոյն համար:

Այս երկրին մէջ ներկայիս 60 հայ հա-
մայնական տնտեսութիւններ կան (կոլ-
խոզ), որոնք ծխախոտի մշակութեամբ կը
զբաղին: Պերիան գիւղերը ցուցակադրեց՝
աքսորելու համար, բայց մահն ըսաւ՝ թէ
ո՛չ, հիմա դուն գնա յաւիտենական աք-
սոր: Պերիայի ծննդավայրն Ափսաղիոյ
մէջ է, Սոխումէն քիչ հեռու, հիմա իր
գիւղը համբաւ չունի եւ իր տունն այցե-
լոյ ուխտաւորներ չկան:

Սոխումի թիկունքին ձգեցինք Կովկաս
լեռները, որոնք բնական պարիսպ կաղ-
մած են Ռուսիոյ եւ Կովկասի մէջ. բայց
Ռուսերը անոնց վրայէն ալ ցատկեցին եւ
հարաւ անցան:

Պաթում մտանք հեղեղային անձրեւով:
Նաւահանգիստի գիւմացի շէնքին վրայ
դրուած էր Անտառական ինքնավար հան-
րապետութիւն, բայց Անտառի ալ Վրաս-
տանի ենթակայ է: Երբեմն թունդ քրիս-
տոնեաներ եւ հիմա մահմետական են: Ի-
րենք ալ լատինական տառեր ունին, բայց
չեն սորվիր, Ղուրանի գիրերուն չեն նը-
մանիր: Յարերու ժամանակ երկու բանով
կը զբաղէին, գողութեամբ եւ այգիներու
պահպանութեամբ. հիմա կոլխոզ ունին եւ
անասնաբոյժ են:

Պաթում իրենց մայրաքաղաքն է. բայց
աճառացի լեռներու մէջ կը բնակի: Քա-
ղաքին մէջ ամէնէն շատ հայեր են եւ քիչ
վրացիներ ու ռուսեր: Պաթումը շատ գե-
ղեցիկ քաղաք է, միջերկրականեան բոյ-
սերով զարդարուած, բայց իր Սապորը
(ռուսական եկեղեցին) չկար եւ ոսկեղէն
գմբէթները չէին ցոլանար ծովին մէջ:

Հոս օտար նաւեր չեն հասնիր, սակայն
Թուրքիա շատ մօտ է եւ դիւրին է Թուր-
քիայէն մաքսանենդութեամբ Ղուրան ներ-
մուծել եւ քարիւղի հետ փոխանակել:

Անհրաժեշտ էր հոս ալ ինթուրիստին
ներկայանալ՝ իր պաշտպանութիւնը վա-
յելելու համար:

Պաթումէն Թիֆլիզ հաղիւ 300 մղոն
ճամբայ ըլլայ. Եւրոպայի մէջ կարելի է
չորս հինգ ժամէն կտրել, արագընթաց
չողեկառքով. բայց Վրաստանի չողե-
կառքները արագ վաղելու վարժութիւն
չունին:

Երեկոյեան ժամը 9ին երկու եղբորոր-
դիներու հետ մտանք չողեկառք: Հոն ալ
երկու կարգերու բաժնած են. առաջինը
կակուղ կը կոչուի, երկրորդը՝ կարծր:
Գիշերը կարելի է անկողին ունենալ եւ
հանգիստ ճամբորդել՝ վճարելով 10 բուլլ-
ի, անկողին դուրս: Հանգիստ էր ճամ-
բորդութիւնը. պաշտօնէութիւնը հայերու
ձեռքն է. Վրացիները այդ դործերուն չեն
խառնուիր:

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Առաւօտեան ժամը 9ին, մենք հասանք
Վրաստանի մայրաքաղաքը: Կուր դետի
ափին, մէկ կողմը Դաւիթի լեռը, միւս
կողմը Հաւրապարը շրջապատած են հո-
վիտին մէջ տարածուած քաղաքը: Վրա-
ցիները զայն Թիֆլիսաւ կը կոչեն (տաք
կլիմայ), եւ կ'ըսեն՝ աշխարհիս մէջ կայ
ու չկայ Թիֆլիզը կայ: Իսկապէս գեղե-
ցիկ բնութիւն ունի Թիֆլիզը. կեդրոնը,
Կուրի ափերուն, թեւերը տարածած լեռ-
նէ լեռ՝ կապոյտ ջուրին մէջ ցոլացող մեծ
նունուֆարի մը կը նմանի: Շինարարա-
կան նորութիւնները շատ քիչ էին. արդէն
Կովկասի փոխարքայական քաղաք՝ ունէր
իր չքեղ պալատները, պողոտաները եւ
ծառագարդ պուրակները: Վրացիները
լաւ գիտեն թէ Թիֆլիզն Հայերը շինած
են: Երբ 1801ին Ռուսիոյ ձեռքն անցաւ՝
հսկայ գիւղ մ'էր. շնորհիւ գաղթող հա-
յերու, Սիւնիքի մեկնեցերու, Մանթաշեա-
նի մը, Արամեանցի մը եւ այլ հայ հա-

բուսականություն՝ վրաստան ունեցաւ իր դե-
ղեցիկ թիֆլիզը. իսկ վրացիները զայն
զարդարեցին համակրելի կինտոներով:
Ըստ վրացիներու արդի կարծիքին՝
թիֆլիզի հիմնադիրը Վախթանգ Կուրկա-
սալի (Ե. դար) թագաւորն եղած է: Թէ-
պէտ պատմական հիմ չունի այս կարծի-
քը, բայց իրենք կը հաւատան:
Ներկայիս Մետեխի պատմական բերդ-
բանտը քանդեր են. շատ դէշ ըրեր են. ա-
նոր տեղը Վախթանգ Կուրկասալի ար-
ձանը կանգնելու համար, որ հիացած նա-
յի 700-000 բնակիչներով թիֆլիզի վրայ:
Այս Վախթանգ թագաւորը ծանօթ է
մեր պատմութեան մէջ. ան 483 թուին
Վահան Մամիկոնեանէն օգնութիւն խն-
դրեց Պարսիկներու դէմ՝ որ արշաւած էին
Վրաստանը. Կուր դեռի ակերուն՝ ծար-
մանայ կոչուած տեղը՝ պատերազմը տեղի
ունեցաւ, եւ Վախթանգ դաւաճանելով
թշնամիին կողմն անցաւ: Թերեւս Պար-
սիկները խոստացան Հայաստանէն պա-
տառ մը հող տալ: Բայց Վախթանգ Կուր-
կասալի արձանը պիտի կանգնի Մետե-
խի աւերակներուն վրայ:

Ըստ տարածուած կարծիքին՝ թիֆլիզի
մէջ շուրջ 200-000 հայեր կը բնակին, մը-
նացածը վրացիներ, Ռուսեր, Թաթարներ
եւ այլ ազգեր են: Ժամանակին վրացի-
ները հարիւրին 35 չէին կազմեր, հիմա
գերակշիռ են, թերեւս 50 առ 100 ըլլան:
Կառավարութիւնն ամէն հող կը տանի որ
միատարր ըլլայ քաղաքը: Նախ վրացե-
րէն լեզուն տունէ տուն կը պատցնեն,
թէպէտ պարտաւորիչ չէ ոչ-վրացի դը-
պրոցներուն մէջ, սակայն ամէն միջոց
տրամադրելի է բազմացնելու համար
իրենց վարժարանները, հող չէ թէ հայ
դպրոցները ծանր դժուարութիւններ ու-
նենան: Զուտ ուսներէն դպրոցներուն
մէջ վրացի մանուկ քիչ կը գտնուի. մեծ
մասը հայ մանուկներ են: Իրենց ազգա-
սիրական երկրորդ ճամբան է դործէ հա-
նել, կամ արդիւններ ստեղծել անոնց հա-
մար՝ որ չեն ուզեր վրացերէն սորվիլ եւ
մականուներն ծայրը շփիլի աւելցնել:

Վրացին ազգասէր է, կը պաշտէ իր լե-

զուն, հպարտ է իր պատմութեամբ եւ շատ
կնեագներ (իշխաններ) ու տէտէպալներ
(իշխանուհի) ունի: Նոյնիսկ ինթուրիս-
տին մէջ հարկ էր վրացերէն խօսիլ, ուս-
ներէնը թոյլ տրուած է, բայց ուրիշ եւ-
րոպական լեզու չեն դիտեր եւ դուրսէն
եկող օտարականները պէտք է ձեռքերու
նշաններով հասկցնեն իրենց փափաքները:

Խորապէս համոզուած են թէ իրենք ա-
սիական մեծ ցեղերուն կը պատկանին:
Քաղաքացիներ (Քալտի - Քարթլի) Բա-
րեւոնցիներ, Հիթիթներ իրենց նախա-
նորներն են, թէ ձին իրենք բեռնակրու-
թեան վարժեցուցեր են, անիւր դտեր են
եւ Քրիստոսէ եօթը հազար տարի առաջ
արդէն որոշ քաղաքակրթութիւն ունէին:
Այս զգացումը զիրենք հպարտութեամբ
լեցուցեր է եւ չեն ընդունիր հայկական
որ եւ է ազգեցութիւն, կրօնական, պատ-
մական, ճարտարապետական կամ լեզ-
ուական մարդերուն մէջ. իրրեւ թէ երկու
ցեղեր իրարու կողքին ապրած են դարե-
րով՝ չինական պարսպ քաջած իրարու
մէջ: Եղբայրական Վրաստանը հայերու
հանդէպ համակրանք չունի. հին է այս
վէրքը երկու հարեւան ազգերու մէջ: Մին
աշխատասէր, կենսունակ եւ յառաջադէմ,
միւսը կենսուրախ եւ սիրող Կախեթի դի-
նի շուրջ Մոսկով Ժամիլէ (գինիի ուրա-
խութեան երգ) երգելու:

Պետական եւ գլխաւոր պաշտօնները
վրացիներու ձեռքն են, բայց իրենց օգ-
նականները հայեր են՝ դործերը կատա-
րելու համար:

Հաւաքաբար, զուտ հայկական թաղը ոչ
մէկ փոփոխութիւն կրած էր Յարերու
շրջաններէն ի վեր. ցած եւ աղքատիկ
տուններ, ծուռ եւ քարոտ ճամբաներ կը
յիշեցնէին պարսկական օրերը: Հոս էր որ
կը գտնուէր Հայոց նշանաւոր Խոջափանը
եկեղեցին եւ անոր շուրջ տարածուած էր
գերեզմանոցը: Այժմ քանդուած է ամէն
բան, չկայ եկեղեցին, մեռելները աքսոր-
ուած են. Ռաֆֆի, Յ. Թումանեան, Սուր-
դուկեանց փշոտ եւ լքուած շրջապատի մը
մէջ կը մնան: Լսեցինք թէ անոնց շիրիմ-
ներու թիկունքին պատ քաշեր են իրր

պանթէոն. Լորիս Մելիքովի, Արշակ Տէր
Ղուկասեանի եւ Բէյրութեան զօրավար-
ներու շիրիմները տարադրուած են Ս.
Գէորգ եկեղեցիին բակը:

Բացի Հայերու բազմահազար տունե-
րէն, պալատներէն, վրացիները վաղուց
զբաւած են Մանթաշեանի Արքիսքիֆ
թատրոնը: Երեւանի պլաշտը (Երեւա-
նեան հրապարակ) տուած են Լենինին, ա-
նոր մէկ անկիւնը փոքրիկ ածու մը յատ-
կացուած է Կառնիին, որուն պղնձէ գլու-
խը հաղիւ կը տեսնուի խոտերուն մէջ
(Կամոն համայնավար նշանաւոր հայ յե-
ղափոխական էր):

Հայերու թատերական կեանքը ամփոփ-
ուած է Հաւաքաբարի մէջ, ուր ունին ի-
րենց սեփական նոր թատրոնը: Թատե-
րական խումբն այնքան զօրաւոր չէ, ինչ-
պէս Երեւանի մէջ. դրամապէս նեղ կա-
ցութիւն ունի: Տեղական պետութիւնը
հարկ չի տեսներ նպաստել հայ թատրո-
նին եւ դերասանները կամ Երեւան կը
գաղթեն, կամ ուրիշ արհեստի կը հետե-
ւին:

Ես ներկայ եղայ Երեք ներկայացումնե-
րու, դժբախտաբար միշտ անձրեւ եկաւ:
Երկուքին նիւթերը արդիական կեանքէ
առնուած էին եւ հետաքրքրական չէին,
երրորդը Դ. Տէմիրճեանի Վարդանաֆի
խոսացումն էր: Դերասանները իրենց կա-
րելին ըրին՝ լաւ ներկայացնելու համար,
բայց խոսացումը անյաջող էր. անըմբռնե-
լի էին Ղեւոնդ երէցին բացակայութիւ-
նը, Յովսէփի կաթողիկոսին խրոսելիակի
դերը: Հարկ էր խուսափիլ կրօնական
բացատրութիւններէ, բայց ազգասիրա-
կան անցքերը ուժեղ չէաւ կ'առնէին եւ
ներկայ երիտասարդութիւնը խելայից կը
ծափահարէր. դա լաւ նշան էր:

Թիֆլիզ՝ որ երբեմն մեր արեւելահայ
մտաւորականութեան կեդրոնն էր, այժմ
բոլորովին անշքացած է: Պոլիս թրքա-
կան լուծին տակ աւելի զրաւան կեանք
ունի: Թիֆլիզի միակ մտաւորականը Ծե-
րուն Թորգոմեանն է, գրեթէ կոյր եւ յու-
սահատ պայքարի մէջ: Միակ հայկական
լրագիրը Սովետական Վրաստանն է. շուրջ

20-000 տպաքանակ ունի, բայց իր ծախ-
քերը չի գոցեր: Վրացիներն անպէտ լրա-
գիր համարելով՝ խորհած էին զայն փա-
կել. բարեբախտաբար Մոսկուան կը հըս-
կէ վերէն, եւ ստիպած է Թիֆլիզը հան-
դիստ ձգել այդ լրագիրը: Սակայն զար-
մանալի է որ քսան հազար օրինակներ
կարող չեն հաւասարակալել լրագրի տըն-
տեսութիւնը. դժբախտ նշան՝ թէ կարդա-
ցողներ չունի:

Փողոցներուն մէջ գրեթէ հայերէն խօ-
սակցութիւն չի լսուիր. վա՞խ... թէ վատ
սովորութիւն, թէ քաղաքակրթուած են
եւ ականջէ ականջ կը փոփոսն՝ առանց
վրացիներու պէս փողոցներն աղմկելու:
Շատեր կան որ տուններու մէջն ալ վրա-
ցերէն կը խօսին. կան վրացիներ որ հա-
յերէն գիտեն, բայց չկամութեամբ կը
խօսին: Ուրիշներ իրենց մականունին
ծայրը թուրով Շվիլի փակցուցեր են,
(վրացական մականունի ածանց). ասոնք
գործի մարդիկ են եւ վրացին շվիլի կար-
դալով հաց ու գործ կու տայ:

Կը խորհիմ թէ նոյն կացութիւնը կը
տիրէ նաեւ Ախալցխայի եւ Ախալքալաքի
շրջաններուն մէջ, թէպէտ այդ գաւառ-
ներուն մէջ, մանաւանդ Ախալքալաք,
ճրագով փնտռես՝ վրացի չես գտներ: Իսկ
Կախեթիս եւ կամ այլուր ցրուած Հայե-
րը անհայր, անմայր պէտք է համարիլ:

Այժմ հայ-վրացական յարաբերութիւն-
ները աւելի լարուած են, քան ցարերու
շրջանին. Հայը վրացին չի սիրեր, վրա-
ցին Հայը չի սիրեր. մինչ դարերով դրա-
ցի ազգեր, դարերով իրարու հետ գինակ-
ցած ու պաշարած են աշխարհակալնե-
րու դէմ, եւ Վրաստան իր դոյութիւնն ու
երկար թագաւորութիւնը հայ բանակնե-
րուն կը պարտի. մենք եղած ենք իրենց
վահան եւ թերեւս ապագան նոյնպէս ի-
րարու շղթայէ այդ երկու ազգերուն ճա-
կատագիրը:

Թիֆլիզ գեղեցիկ քաղաք է եւ կը հրա-
պուրէ շրջիլ իր փողոցներուն մէջ: Ա-
մէն օր ամէն վայրկեան լի են ճամբաները
բազմութեամբ. վրացերէն կը խօսին եւ
բարձրաձայն վրացերէն կը խնդան. բա-

ւական մաքուր հագուած են: Երեւան աղբայտ չէ, նա օրուան մէջ լուծեամբ կ'աշխատի, երեկոները կը զուարճանայ: Վրացի կոճղը Թիֆլիզի համար չէ, անոր բնակիչները կը թուած են, ճարպիկ են, քաղաքացիք եւ ազգային դադարանալահութիւն ունին. չեն աշխատիր, կ'աշխատեն հայը, ռուսը, թաթարը, հըրեան, իսկ իրենք երկրին տէրերն են, կը հրամայեն եւ փափախ կ'ընեն (պետական դրամը իւրացնել կամ աւելորդ դրամ պահանջել) եւ վրացական փափախը շատ խոշոր է: Վարձակառք մը (թաքսի), որուն ժամանակացոյցը եթէ 7 բուլլի նշանակէ, քեզմէ 15 բուլլի կը պահանջէ. ինքնաշարժը պետութեան է, իր ամսականը 400 բուլլի է, չի բաւեր. պէտք է ամիսը դէթ 2000 բուլլի հասցնէ: Երեւանի մէջ փափախը շատ աւելի փոքր է:

Մարդական գետնի վրայ հայեր եւ վրացիներ եռանդով մրցումի մէջ են, մանաւանդ ոտնադուռի խաղերու տեսն: Երկուքն ալ լաւ խումբեր ունին, զարմանալին այն է որ Թիֆլիզի մէջ Հայերը կը պարտուին, Երեւանի մէջ Վրացիները. շատ քիչ կը պատահի որ մէկը միւսին դաշտին մէջ յաղթական ելլէ: Երբ խաղը Թիֆլիզի մէջ է, Երեւանէն շուրջ քսան հազար երիտասարդներ դաշտ կը վազեն՝ դրաւելով հաղորդակցութեան բոլոր միջոցները: Հոն ալ մարդ են, երբեմն հարկ կ'ըլլայ կռիւի ելլել: Բայց վրացական խումբը աւելի լաւ մարզուած եւ հարուստ է:

Ե Ր Ե Ի Ա Ն

Ինչպէս ամէն սիրտ կ'երազէ իր սիրելին տեսնել ու դայն վայելել, այսպէս էր եւ ինձ համար. Հայաստան տեսնել իր նոր ու փառաւոր մայրաքաղաքով:

Թիֆլիզէն Երեւան շատ են հաղորդակցութեան միջոցները, սաւառնակ, շոգեկառք, հանրակառք, որոնք օրը երկու անգամ կ'երթան ու կու դան: Ես նախընտրեցի շոգեկառքը: Իմ օթեակիս մէջ տեղ բռնած էր թրքահայ տիկին մը որ

Հայաստանի տէպուտատ էր. բայց ես երազ ունէի պատուհաններէն տեսարանները դիտել: 50 մղոն վրացական հող էր. կայարաններուն մէջ կառիաչի կոկոռոզ (խարկած լազուտ) կը պոռային: Շոգեկառքը Հայաստանի կը պատկանէր, պաշտօնեաները բոլորն ալ հայեր էին, ճամբորդները հայեր: Յամբընթաց էր, դանդաղ կը յառաջանար. 376 մղոն ճամբան մենք պէտք էինք 14 ժամէն կտրել: Շոգեկառքները Մոսկուայի ժամով կ'աշխատին: Ռուսաստանէն եկող շոգեկառքները շատ աւելի արագ են:

Վրացական դաշտերը ոսկեհատիկ լազուտներով կը շողշողային. արդաւանդ դաշտեր, աղքատ մշակութիւն: Մութը գետին իջած էր երբ հասանք Սատախլու, Հայաստանի առաջին կայարանը: Սրտէս սարսուռ անցաւ. մեր երկիրը կը մտնէի. անցադիր, մաքսատուն չկայ, սովետական մէկ հող է: Երկաթուղիին ձախ կողմը Սանահին եւ Հաղբատ վանքերը կան, մութ է, չեն տեսնուիր. աջին Ալլահվերտիի պղնձի հանքերը լուսաւոր եւ աղմուկալից են. պղնձ կ'արտադրեն ու Վրաստան կը դրկեն աշխատելու համար: Սկիւսաւ հայկական բարձրաւանդակը, շոգեկառքին երկու տեղաշարժ լծեցին. շուրջ 1000 մեղր պիտի բարձրանար Արարատեան դաշտն ելլելու համար: Տեսնուեցաւ Լենինականը լոյսերու մէջ: Լենինականի մուտքն արդիւրած է օտարականներուն, քապու է, շատ մօտ է թրքական սահմանին եւ գինուորական դօտի է:

Արեւն արդէն կը սաւառնէր Արազածի դազաթին երբ Երեւան մտանք: Մեր աջին Արարատը ալապատիւ դազաթներով կը շողար: Երկու հսկայ լեռներ, որոնք սիրով գրկած են ամբողջ Հայաստանը՝ փոքրիկ մանուկի մը պէս:

Վարդագոյն քաղաքը բացաւ իր թեւերը: Տէ՛ր, Աստուած, բացականչեցի ես, այս ինչ հրաշք է. ո՛րքան տենդաղին աշխատեր է հայ բազուկը՝ իր մայրաքաղաքը դարգարելու եւ տարածելու համար: 24 տարի առաջ երբ Երեւան մտայ, կայարանը ամայի դաշտերու մէջ էր, հիմա

փողոցները հսկայաքայլ քաղեր են եւ կայարանը թողուցեր են քաղաքին դրեթէ կեդրոնը:

Կայարանը, թէպէտ փոքր, գեղեցիկ չէնք էր: Ընդարձակ հրապարակին վրայ՝ Սասունցի Դաւիթը պղնձէ ձիով կը թըռչէր դէպի մարտ եւ յաղթանակ: Քոջարեանը շինած է այդ արձանը. մի՛ փնտռէք գեղարուեստական նրբութիւն. Դաւիթ անհամեմատ հսկայ էր եւ արձանն ալ անհամեմատ է ձիուն ու ձիաւորին մէջ. լոկ վիթխարի ոյժը մարմնացած է. եւ հեղինակը յաւակնութիւն չունի Միքել Անճելոյ մը կոչուելու:

Լայն ու երկար փողոցներէն ինքնաշարժը անցաւ եւ հասաւ Լենինի հրապարակը: Հսկայ է այդ հրապարակը եւ ըսողներ եղան թէ աւելի մեծ է՝ քան Մոսկուայի Կարմիր հրապարակը: Չուսձեւ է եւ չըջապատուած է հինգ բարձրադիր շէնքերով: Բացի թանգարանի շէնքէն, որ քիչ մը դաճած մնացեր է, Ունիվերսալը, պետական շէնքը, Արմէնիա պանդոկը եւ նամակատունը չըջանալով են զինքը: Այդ հսկայ շէնքերը միաձեւ են, միապաղաղ, առանց անձնականութեան. կարծես իրարմէ օրինակուած երկուորեակներ ըլլան: Ծարտարապետները ներշնչուած են հայկական եկեղեցական ոճէն, մինչեւ իսկ օրինակներ են հին տաճարներու խոյաները, դռներու դարձերը, խաղողն ու ցորենը: Քիչ մը շատ օրինակներ են. երանի՜ թէ հեռուէն ազդուէին եւ ոճաւորէին արդիական հողիով:

Հրապարակին մէկ կողմը արձանացած է Լենինը, բռնած իր այլեւս դասականացած դիրքը: Պղնձէ հսկայ արձանը գեղեցիկ ոչինչ ունէր, բայց պատուանդանը շատ յաջող դրոճն էր տեղացի յոյն վարպետի մը:

ԱՐՄԵՆԻԱ ՀԻՒՐԱՆՈՅԸ

Որձաքարէ քանի մը աստիճաններ կը հրաւիրեն օտարականը մտնել հիւրանոց: Հսկայ դուռ մը, լայն կամարով, քանդակուած է հնօրեայ դարձերով. խաղո-

ղի ողկոյզ, ցորեն եւ ձեռադրային դարդեր. այնպէս կը թուի թէ արքայական պալատի մը մուտքն է: Դիմացդ պիտի գտնես լայնակամար եւ ընդարձակ սրահ մը, սիւնադարձ եւ սլացիկ, բայց ո՛չ, քայլերդ կանգ կ'առնեն սեւ մարմարէ սանդուղի մը առջեւ, որ կը բարձրանայ վերին յարկերը՝ ցած կամարի մը տակէն:

Հիւրանոցը 93 սենեակ ունի, եւ շուրջ 300 պաշտօնեայ: Եօթնյարկանի շէնքը հսկայ քառակուսի տունի մը կերպարանքով՝ տակաւին նեղ կու դայ հիւրեր ընդունելու: Մոսկուայէն յետոյ, կարծեմ միակ քաղաքն է որ շատ այցելուներ ունի, մեծ մասով հայեր. Թիֆլիզի Ինթուրիստը հազիւ 600-700 հոգի կը մտնեն, Արմենիա արդէն չորս հազարը կ'անցնի, հաշուելով միայն հայերը: Սենեակները փոքր են, ունին տաք ջուր, բաղնիք եւ առանձին ցանցով հեռախօս: Երկու փոքր վերելակներ կ'իջնեն ու կ'ելլեն՝ առաջնորդութեամբ պաշտօնեայ կիներու:

Պաշտօնէութիւնը մեծ մասով հայեր են, կան նաեւ ռուս կիներ, մալականներ, Անդրանիկի գինուոր: Ռուսները քիչիկ մը հայերէն կը խօսին: Արմենիա հիւրանոցը բոլոր համայնավար Ռուսիոյ մէջ առաջին տեղը կը բռնէ իր մաքրութեամբ, կազմակերպութեամբ եւ հիւրասիրութեամբ. դեռ այդ տարին նորէն ոսկի մեթեամբ. դեռ այդ տարին նորէն ոսկի մեթեամբ: Սակայն եւրոպական պանդոկներու համեմատ՝ կարելի է երկրորդ կարգի համարել: Ծաշարանի սպասուորները մեծ մասով դաղթող հայեր են, մանաւանդ քեսապցիներ, որոնք աւանդութեամբ ճաշարաններու մէջ կը ծառայեն:

Երկրորդ յարկին վրայ, չէնքին ամբողջ երկարութեանը բռնած են ճաշարանները. կապոյտի դարնոց սպիտակ ներկուած եւ կամարակապ: Երեք մեծ սրահներ են. չորրորդը անյայտ հիւրերու համար: Սեղանակէ, ըստ դանադան երկիրներէ եկող հայերու կամ օտարներու: Տպագրուած ճաշացանկ չունին եւ խոհանոցին շատ հարուստ չէ. սպասուորը քեզի միշտ պի-

տի ըսէ. «Էջմիածնի ապուր, պորժ, թան-
ապուր, միս, խորոված եւ կանաչեղէն»:
Հարկ չկայ երկար մտածելու. երեք օրը
մէջ մը կարելի է կրկնել: Ճաշէն յետոյ
ամէն սեղանաւոր իր զրպանէն կը հանէ
մասնաւոր տեսարակ մը, ուր ամէն օրուան
համար երեք կտրոններ կան, զորս կը
յանձնէ առաջին ինթուրիստը՝ երբ Ռու-
սիա մտնեն: Նախաճաշին 10 բուլլի, կէս
օր՝ 22 բուլլի, ընթրիքին՝ 18 բուլլի:
Եթէ կերածդ վրայի գումարէն աւելի է՝
պէտք է մնացածը բուլլիով վճարել. ե-
թէ պակաս է՝ Օտեսոսա զրամդ բուլլիով
եւ կու տայ, Թիֆլիզ փախալս կ'ընէ, Ե-
րեւան սիկարէթ կու տայ:

Տեղացիները ընդհանրապէս քիչ կը յա-
ճախեն Արմենիա, որով է. սակայն ըն-
թրիքին՝ ճաշարանները կը լեցունեն նաեւ
տեղացիներով, որոնք կոնեաքի առջեւ
նստած՝ բարձրաճայն կը խօսին, միւս
կողմէն ճաշարանի նուազախոսները կը նը-
ւաղէ եւրոպական կտորներ եւ կը ձեւա-
նայ բարբարոս համերգ մը:

Սովետական բոլոր քաղաքներու ին-
թուրիստները ուղղակի Մոսկուայի կը
պատկանին. պաշտօնեաները, զրամը
(տոլար կամ ստերլին) Մոսկուա կը կե-
դրոնանան, արտասահմանեան առեւտուր
է. Հայաստանի կառավարութիւնը չի
խառնուիր:

Գետնաշարիը նեղ եւ երկայն՝ քիչ տեղ
եւ բազմոց տուած է հիւրերուն, սափրի-
չով Գ բաժանմունքը զրաւած են պաշտօ-
նատուները. հեռաճայն, նամակատուն,
տեսչարան եւ այլ գործունէութիւն: Եր-
կու կողմերուն կան դրքերու եւ երեւա-
նեան յիշատակներու վաճառանոցներ:

Ինթուրիստ այցելու մը կրնայ իր աղ-
ղականներուն մօտ երթալ ճաշել, բնա-
կիլ. սակայն պանդոկի իրաւունքը պէտք
է արտասահման կամ հոն վճարած ըլլայ,
աղաւ չէ ուղած տեղը ուղած պանդոկը
երթալ եւ զրամը ծախսել: Ժամանակն
երկարածդել դրեթէ անկարելի է, պէտք է
պաշտօնական մարմին մը զինք հիւր ըն-
դունի, կամ բացառիկ պարագային՝ վը-
ճարել արտասահմանեան զրամ: Այս դըժ-

ուարութիւնը կը համարիմ թէ տեղի պա-
կտէն է: Երեւան երեք պանդոկ ունի.
Արմենիա, Սեւան և Երեւան (նախկին ին-
թուրիստը): Երեք պանդոկ 550.000 բնա-
կիչով մայրաքաղաքի մը համար՝ ոչինչ է:

Արմենիա պանդոկի ամէնէն յուղիչ
վայրկեանը առաւօտեան ժամերն են կամ
երբ նոր հիւրեր կը հասնին. զրան առջեւ
բազմութիւնը կը խնդուի. ամէն մէկը
ցաւ մը ունի. հեռաւոր սիրելիէ մը լուրի
կը սպասէ. եւ ահա հարցումներու տա-
րափ մը. ընկե՛ր, դու Ամերիկայէ՞ն ե-
կած ես, Ֆրանսայէ՞ն, Յունաստանէ՞ն,
Սիւրիայէ՞ն, Լիբանանէ՞ն. եւ երբ բախ-
տով ծանօթ մը գտնեն, արցունքով հար-
ցումներ կ'ընեն ու կը հեռանան: Երանի՛
անոր որ յանկարծ լուր մը կ'առնէ. կար-
ծես աղգականը դատած ըլլայ, տուն կը
հրաւիրէ, քղանցքներուն կը փարի եւ յու-
ղումով կը հեռանայ: Այսպէս եւ ինձ պա-
տահեցաւ որ ծանօթ ելայ մէկու մը կը-
նոջն ու զաւակին, որոնք մերժած էին
Հայաստան գաղթել եւ Յունաստանէն
Ֆրանսա փոխադրուել էին. մարդը վիզա
ինկաւ ու լացաւ, տարիներով լուր չու-
նէր:

Խեղճ Հայեր, դարերով բաժան բաժան
աղրած ու սիրով մաշեր են, բաւ մը ըս-
տեղծեր են, կարօտ, որ ուրիշ աղգերու
բառարաններու մէջ նման զգայուն ի-
մաստ չունի:

Հայը սրտի ժողովուրդ է եւ Երեւան-
ցին աւելի տաք սիրտ ունի: Արտասահ-
մանի հայերը եղբայրներ կը նկատէ եւ
սիրով կը բարեկամանայ: Դժբախտաբար
արտասահմանէն այցելող հայերու ջախ-
ջախիչ մեծամասնութիւնը ծերեր եւ տա-
րեց կիներ են: Արտասահմանի հայ երի-
տասարդութիւնը կարծէք աւելի կը սիրէ
օտար մայրերու վրայ թափառիլ, հոգիով
մաշիլ՝ քան թէ Հայաստան երթալ, հայ-
րենի հողը տեսնել:

ՓՈՂՈՑԷ ՓՈՂՈՑ

Լենինի հրապարակէն կը բաժնուին
հինգ հսկայ պողոտաներ, զանազան ուղ-

ղութեամբ. Արովեան, Սնդուկեանց, Նալ-
բանդեան, Ամիրեան, որոնք գետերու հո-
սանքին պէս կը տանին ու կը բերեն ամ-
բոխը: Հովասուն ծառերը զիրենք չըր-
ջանակած են, թէպէտ շատեր գետ պա-
տանի:

Քաղաք մը՝ որ ամէն օր կը շինուի,
կ'ընդարձակուի, կը տարածուի, կը հե-
ռանայ կեդրոնէն, ուրիշ կեդրոններ ձե-
ւացնելու համար: Փողոց փողոցի կը յա-
ջորդէ եւ Երեւանի երակները կը յորդին
նոր կեանքով: Բռնած է Քանաքեռ բլու-
րէն մինչեւ Կարմիր բլուր, Նորքէն մին-
չեւ Էջմիածնի ճանապարհը: Ոտքերը
երկարած է Հրազդանի ափերուն եւ կա-
մուրջներ զինքը կը կապեն դաշտերու եւ
բլուրներու: Ծուրը 17 մղոն տրամագիծ
մը Տ-ի ձեւով եւ մեքենաները տակաւին
կը փորեն նոր ճամբաներ: Հայերը կ'ու-
զեն որ իրենց նորակերտ մայրաքաղաքը
գերազանցէ Թիֆլիզը. նոր Մոսկուա մը
պիտի չինենք, կ'ըսեն հպարտութեամբ.
բայց Թիֆլիզը՝ Կուր գետի ափերուն՝ ա-
ւելի յարմար է գեղեցկանալու, սակայն
չկան Ստալին եւ Պերիա, չկան հայ բա-
ղուկներն աշխատելու, եւ Թիֆլիզ կանգ
առած է: Հայ ճարտարապետները կանգ
չեն առնել նորութիւններ ստեղծելու հա-
մար. երանի՛ թէ խորհէին շինութեանց
մէջ զանազանութիւն դնել, միշտ նոյն ու-
ճի կրկնումը տաղտկալի է, փողոց փո-
ղոցէ չի զանազանուիր ո՛չ գոյներով եւ
ոչ ճարտարապետութեամբ. նոյն դարդե-
րը, նոյն խոյակները, նոյն սիւնները ա-
մէն կողմ. թերեւս ճաշակի խնդիր է, սա-
կայն օտարականի մը աչքերը շուտով կը
նկատեն այս միաձեւութիւնը. գեղեցկու-
թիւնը՝ ճաշակաւոր զանազանութեան մէջ
է:

Գրեթէ ամէն փողոցի մէկ անկիւնը կամ
ծայրը շինուած են հասարակաց պարտէզ-
ներ, զոր իրենք այգի կը կոչեն. ծաղկա-
զարդ են եւ ծառերով հովասուն: Ամէնէն
գեղեցիկը Սնդուկեանց այգին է, քաղա-
քին կեդրոնը, ուր զիչերները բազմու-
թիւնը կը զբօսնու կամ բացօթեայ շար-
ժանկարի կ'երթայ, կամ համանուն թա-

տրոնը: Հրազդանի ափերուն կը գտնուի
Կոմիտասեան պարտէզը, բաւական մեծ
եւ ծառազարդ: Հոն բարձունքի մը ար-
տեւանին վրայ կը գտնուին Ծիրվանդա-
դէի, Կոմիտասի, Իսահակեանի, Յ. Յով-
հաննէսեանի դամբանները, իրարու մօտ,
անշուք, զոր պանթէոն կը կոչեն. ոչ մէկ
չքեղ կամար կայ իրենց վրայ, ձմեռը
ցուրտէն կը սառնի, ամառն արեւէն կը
վառնի:

Բարձրանալով Արովեան փողոցը, ճամ-
բան քեղ կը տանի դէպի Քանաքեռ. մեծ
վիպասանը ձեռքերը կուրծքին խաչածե-
ւած կը դիտէ Երեւանը: Պողոտան կը
բարձրանայ եւ ահա խիտ ծառերու մէ-
ջէն 40 մեղր պատուանդանով եւ 17 մեղր
հասակով պղնձէ մարդ մը քեղ կը դիտէ,
հոգեւոր հրեշտակի մը պէս. Ստալինն է,
որուն նայուածքը գրկած է ամբողջ Երե-
ւանը եւ հեռաւոր դաշտերը: Ուր որ եր-
թաս՝ չես կարող խուսափիլ իր աչքերէն:
Չունի ոչ մէկ գեղարուեստական արժէք,
Ստալինն է, իր պէխերով եւ դէմքի կոշտ
դիմերով: Յուսանք թէ Նիքիթաչի ձայնը
հոս ալ հասնի եւ այդ նարուզողոնոսոր-
եան արձանը այլեւս չսարսափեցնէ հայ
մանուկները:

Այժմ Քանաքեռի, Նորքի եւ Նոր Արար-
կիի բլուրները միայնակ տուններով ծած-
կուած են, հոն կը բնակին ընդհանրապէս
ներգաղթողներ, ունենալով իրենց սեփա-
կան տունն ու փողոցի պարտէզ մը: Տե-
սակ մը հայրենակցական տուններու մի-
ութիւն կազմել են, ուր առմանահայը
առանձին է, իր թաղն ունի, յունահայը,
Ֆրանսահայը, Սիւրիա, Լիբանան ու Նոր
Խորհրդը քովէ քով կ'ապրին: Գեղեցիկ
Խորհրդը քովէ քով կ'ապրին: Գեղեցիկ
է այս բլուրներէն դիտել Երեւանը, ծը-
խաններու անտառ մը, պետական օփե-
րան, փողոցներ ու պարտէզներ, բանա-
ստեղծական համադրութիւն մը կը ձե-
ւացնեն եւ բեմին խորքը Արարատն ու Ա-
րագածը կը փակեն տեսարանը:

Երեւանի ամէնէն գեղեցիկ եւ արդիա-
կան պողոտան Ստալինի անունը կը կրէ
(այժմ Լենինի պողոտայ): Մեկնելով
Հրազդանի ափերէն, 2.50 մղոն երկարու-

Թեամբ կու գայ եւ կը հանդէի Մատենա-
դարանի աստիճաններուն տակ: Լայն է,
լուսաւոր է, մաքուր է եւ երեւանի փառ-
քըն է: Ամառնային ամէնէն հաճելի ձե-
մեղալայրն է, եւ զիշերները բազմութիւն
կու գայ եւ կ'երթայ զոյգ մայթերուն
վրայ: Այնքան լուսաւոր թէ օդին մէջ եւ
թէ հողին մէջ պողոտայի բաժանումին
համար, որ կարելի է հանդարտ եւ ա-
ռանց ակնոցի կարգալով քալել:

Դպրոցական մանուկներ կը հսկեն՝ եր-
թեւեկը կանոնաւորելու համար: Ոչ ոք
գետնին թուղթ կամ լուցիկ կը նետէ. այս
փողոցը քաղաքակրթութեամբ է:

Ինքնաշարժներու սպասարկութիւնը
չառ ցանցառ է. երեւան շուրջ 900 հա-
սարակաց քաֆսիներ ունի, կան հանրա-
կառններ, զորս Թրէյլֆուս կը կոչեն,
եւ կան դադատագողի անհատական ինքնա-
շարժներ, որ զիշերները խուսափուկ ծա-
ռայութիւններ կ'ընեն: Եւրոպական դա-
ւառային քաղաքի մը չափ ինքնաշարժ
չունի: Հանրակառններու գիները սուղ
չեն, բայց ինքնաշարժները առատ բարի
ձեռք կ'ուզեն:

Աշխատանքի պահերուն՝ փողոցները
գրեթէ դատարկ են, ամէն ոք ապրուստի
ետեւէն է. երեկոյեան ժամը հինգէն յե-
տոյ կարելի է տեսնել լեցուն փողոցներ:
Հայերը վրացիներուն պէս դատարկ չըր-
ջի չեն սիրեր, տնային ժողովուրդ են,
եւ իրենց կարեւոր դրադանքն զատ՝ ու-
րիշ աշխատանք մ'ալ կը ստեղծեն:

Փողոցներուն մէջ հաւասարապէս կը
լսուին հայերէն եւ ռուսերէն լեզուները.
հայերը հաճոյքով կը խօսին օտար լեզու-
ներն ալ. վրացիները միայն վրացերէն կը
խօսին ու մեզի բարի օրինակ կու տան:

Երբեմն խումբ խումբ գեղնորակ աղ-
ջիկներ կ'անցնին, ասոնք ռուսեր են.
կ'անցնին իրենց հայրենական տարազնե-
րով՝ քիւրտեր, թաթարներ. կան յոյներ
եւ այլ ազգեր: Գիւղացի դասակարգը
այնքան քաղաք խուժեր է, որ չեն գտներ
երեւանցիներու գեղեցիկ տիպարները:

ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒԿԱՆՆԵՐԸ

Երեւանի մէջ երեք տեսակ շուկաներ
կան. Գոց շուկայ, Կոլխոզի շուկայ եւ
փողոցներու կրպակներ:

Գոց շուկան Ստալինեան պողոտային
վրայ կը բացուի: Կամարաձեւ հիւսնալի
դուռ մը՝ զանազան թռչնային զարդերով՝
անոր մուտքը կը կազմէ: Չարդերը օրի-
նակուած են ձեռագիրներէն, նուրբ եւ
գեղարուեստական են, ու անպայման տը-
պաւորիչ՝ այցելող օտարականին վրայ:

Ներսիս լայն միակամար շուկան է. սե-
ղաններ շարուած են ասֆին անդին, ուր
առաւելապէս պտուղ եւ կանաչեղէն կը
ծախուի: Հայաստանի ոսկի խաղողը,
տանձը, խնձորները գետեղուած են սե-
ղաններուն վրայ: Երեւանի շուկայ շուկան
է. ունեւորները միայն կրնան մօտենալ
անոր գիններուն: Քիւրճ մը խաղողը 6
րուպլի, քիւրճ մը տանձը 9-10 րուպլի,
ինչ որ գործաւորի մը կէս օրականն է
գրեթէ: Ապրանքները լաւ օրակի են, քիչ
են գնողները:

Քաղաքին միւս կողմը կը գտնուի Կոլ-
խոզի շուկան: Նեղ անցքերով, քիչ մը աղ-
տոտ, հնադարեան կրպակներով, խճող-
ուած յաճախորդներով, իսկապէս արեւե-
լեան պազար մ'է: Հոն կը տեսնուին հա-
յեր, քիւրտեր, թաթարներ, յոյներ, ռու-
սեր, եկած գիւղերէն, նոյնիսկ այլ հան-
րապետութիւններէ, վաճառելու համար
կոլխոզի հունձքը: Կոլխոզը Ռուսաստանի
մէջ երկրորդ ոյժ կազմած է տնտեսական
գետնի վրայ. ինքը կ'որոշէ սակերը, կը
պարտադրէ իր գիները, կրնայ քաղաք մը
պատժել՝ ապրանք չտալով, եթէ արդելի
հանդիպի: Եղաւ ժամանակ մը որ Թիֆլիզ
պատժուած էր եւ գետնախնձոր չէր հա-
ներ: Կոլխոզն իր ապրանքները կը տանի
Կովկասէն մինչեւ Ռուսիոյ խորքերը,
Թուրքեստանէն Մոլտաւիա, երբ գիտ-
նայ թէ հոն ապրանքը լաւ գին կ'ընէ:
Սովետ կառավարութիւնն ստիպուած է
հաշուի առնել այս նոր ոյժը եւ թուլցնել
անոր մէջքին սեղմած դօտին: Կոլխոզի
գիները աւելի ցած են, հոս խաղողի քի-

ւոն 5 րուպլի էր, տանձ-խնձորը 7-8 րուպ-
լի. կանաչեղէնի տեսակները 2-3 կամ 4
րուպլի:

Փողոցներուն վրայ կան փոքրիկ կըր-
պակներ ուր կը վաճառուին Սովխոզներէն
(պետական տնտեսութիւն) հասնող ապ-
րանքները: Գիները անհամեմատ կերպով
ցած են. քիւրճ մը խաղող 3 րուպլի, տան-
ձը խնձորը (որ դժուար կը գտնուին) 4-5
րուպլի, սակայն պէտք է ռուսի համբե-
րութիւն ունենալ եւ ժամերով պոչ բըռ-
նել:

Ուտեստեղէնի, հաղուստի կամ կօշիկի
խանութներուն առջեւ այլեւս երկար պո-
չեր չկան, ինչպէս երբեմն էր. ապրանքը
առատօրէն կայ, սակայն քիւրճ մը ձեր-
մակ պանիրի համար՝ 27 րուպլի կ'ուզեն,
կարադին 37 րուպլի. չիւ մը երեք-աստղ
կոնեաքին 47 րուպլի. իսկ Դուինի կամ
Յորեկեան կոչուած կոնեաքներուն կը
պահանջեն 60-63 րուպլի:

Սիւրիայէն ներգաղթողը Հալէպի պիւ-
տակ կը փնտռէ, Լիբանանէն եկողը՝ պա-
նան, Յունաստանէն եկողը՝ գիրուկ ձի-
թապուղ, եւ Պրանսայէն ներգաղթողը՝
լիմոն. լիմոնը հոն փողոցներու վրայ հա-
տը 3 րուպլի կը վաճառուի, շատ թանկ
է, երկու տուփ պուլիտրական լիւքս սի-
կարէթ ըսել է:

Պուլիտրայէն մինչեւ Ռուսիոյ խորքերը
մեծ քաղաքներու մէջ կան Ունիվերսալ
կոչուած մեծ վաճառանոցները, ուր ու-
տեստեղէնէն մինչեւ հաղուստ եւ ամէն
տեսակ ապրանք կարելի է գտնել. գիներն
ամէն կողմ նոյնն են. պետական են: Կա-
նացի հաղուստի երեք տեսակներ կան,
25, 50, 100 րուպլի մեղրոն: Այր մարդ-
կանց կօշիկները 293-600 րուպլի. եւ երբ
նկատի առնենք որ բանուոր մը նուազա-
գոյն ամսական 500 րուպլի կը վաստիկ,
բժիշկ մը, ճարտարապետ մը ամսական
1200 րուպլի կ'առնէ, այս գիները շատ
սուղ են եւ Հայաստանի պետութիւնը կը
ջանայ վաստակն ու սպառումը ժամանա-
կով հաւասարակաւ: Համայնավար եր-
կիրներու մէջ շատ նորոյթի չեն հետե-
ւիր. գաղափար չունին օտար երկիրներու

արտադրութիւններուն եւ դո՛ւ են իրենց
ունեցածէն: Զինաստան՝ նկարուած տու-
փեր, անկողինի զարդարուն ծածկոցներ
եւ քիմոնոյ կը զրկէ, բայց ատոնք առ-
օրեայ կեանքին հարկաւոր չեն:

Օտարականի մը համար տարօրինակ կը
թուի երբ կը մտնէ խանութներ, ուր հան-
քային ջուր կը ծախեն, Արդիի, Ջերմալի
ջուրերը, մէկ շիշը (փոքր) մէկ րուպլի.
կը դնեն եւ տեղւոյն վրայ կը սպառեն.
օգտակար բան է: Վրաստան հայ ջուրե-
րուն չի հաւնիր, իր Պարփալի ջուրն ունի,
սակայն Մոսկուա հայ ջուր կը փնտռէ:

Փողոցներուն մէջ յաճախ կարելի է
հանդիպիլ փոքրիկ կրպակներու, քիչեր
ուտեստեղէն կը վաճառեն, մեծ մասը
գիրք եւ թղթեղէն է: Պէտք է ընդունիլ թէ
Հայաստանի մէջ աւելի գիրք կը սպառի
քան հայ արտասահմանի մէջ: Ամէն տուն,
գեղեցիկ սովորութեամբ իր գրադարանն
ունի: Ժողովուրդն ինքն է նոր գրքերու
քննադատը. եթէ ընտիր է՝ իսկոյն կը
վաճառուի. իսկ անպէտ գրքերը, եթէ
հաստատիր ալ ըլլան, կրպակներու մէջ
կը գեղինան:

Արտասահմանի հայ գրականութիւնը
դեռ առաջին քայլերը կ'առնէ Հայաստա-
նի մէջ. անշուշտ իրենց ուղղադրութեամբ
եւ լեզուով թարգմանուած: Այս է, կը
խորհիմ, պատճառը որ Դ. Վարուժան,
Արիշան, Մեծարեւոյց, Դուրեան եւ ուրիշ-
ներ Երեւանի մէջ չեն կրցած փողոց մը
ունենալ: Պարոնեան, հեղինակով իր ժա-
մանակի աղաները, կրցեր է մտնել անոնց
հոգիին մէջ եւ իր անունը փակցնել փո-
ղոցի մը վրայ: Բազմաթիւ ճամբաներ
ունին ռուս, թաթար, վրացի հեղինակնե-
րու եւ յեղափոխականներու անուններ.
չառ յայտնի թէ Մարքս, Լենին, Էնկելս
կամ Ստալին կրնան զանազան փողոց եւ
հրապարակ գրաւել:

Արտասահմանէն Հայաստան այցելող-
ները յաճախ զարմանքով կը կարգան փո-
ղոցներու վրայ գրուած ազգեր, Ռեստո-
րան, ստոլայալար (ճաշարան) եւ քիչ ան-
գամ մեր բառերը. ապա կը կարգան Ա-
տլիէ մօտ, կամ Կաստրոնով բարբարոս

անունները: Վրացիները, հակառակ իրենց ազգատ լեզուին, առերևույթ ազգայնական դիրք բռնած են, մենք հայերս քիչ մը չտո միջազգայնական ենք. այս մանր հարցերուն կարեւորութիւն չենք տար, բաւ է որ ժողովուրդն հասկնայ: Շարժանկարին հաճութեամբ կիցնոյ կ'ըսեն, սաւառնակին՝ սամալիոք, պաղպաղակ կը գրեն՝ մարոմի կը կարգան:

Ուրիշ կարեւոր նորութիւն մըն է, որ նախապէս կարելի չէր երեւակայել, դրամատուներու ազգերը՝ որոնք երեք առ հարիւր կը խոստանան դրամ պառկեցնողներուն, եւ կան այս դործն ալ ընողներ:

Երեւան եւ խոշոր կեդրոնները սոսկալի տաղանապ մը կ'անցընեն բնակարանի համար: Յաճախ մէկ սենեակի մէջ 5-6 հոգի կը բնակին, ժողովուրդը խնդրած է աւելի կողմ, հանգիստ բնակարան ունենալը հրաշք է: Ծնունդները կը բաղմանան, գիւղերէն քաղաք կը խուժեն, կու դան ուսանողներ եւ բնակելի տուններու շինութիւնը նոյն քայլերով չ'ընթանար: Կառավարութիւնը տենդազին կ'աշխատի լուծել այս փշոտ հարցը, բայց երկար ժամանակի կարօտ է:

Մտիւր կարմիր չեւաքարէ շինուած գեղեցիկ պալատէ մը ներս, պիտի դարձանաս օսանդուղներու ազատութեան վրայ. թէպէտ անոնք մարմարէ չեն, սակայն տնտեսները կրնան հոգ տանիլ եւ մաքուր պահել. փողոցները աւելի մաքուր են:

Երեւանցիներ հպարտ է իր մայրաքաղաքով, ասիկա արդար իրաւունք է, աշխատել է եւ հասեր է որոշ արդիւնքի մը: Ժողովուրդը շատ անպամ կամաւոր աշխատանքով կը մասնակցի քաղաքին բարեկարգութեան. թէպէտ տակաւին մնացած են հին Երեւանէն ցածկեկ հողածածկ տուններ, պատճառն այն է որ տունի պահար թոյլ չի տար զանոնք փլցնել, եւ լաւ պիտի ըլլայ քանի մը հասն նմոյշի համար պահել:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Ստալինեան պողոտային ծայրը, մէջ առ մէջ օսանդուղներ կը բարձրանան մոխրագոյն լայնաճակատ շէնքի մը դիմաց. շէնքը բերդի մը պարիսպին կը նմանի, առանց ճարտարապետական զեղեցկութեան, սիւներու եւ խոյակներու, պատ մը որ չի խօսիր, եւ քաղաքին կը նայի առանց տեսնելու. Մատենադարանն է: Ծովատին մէջտեղ բացուած նեղ դուռ մը, կ'առաջնորդէ վարի յարկը, ձախին ուտիկան մը նստած է՝ երթեւեկը քննելու:

Կիրէ դունաւոր հասարակ յատակ մը եւ ապա սեւ մարմարէ աստիճաններ կը բարձրացնեն այցելուն դէպի վերին յարկը. սակայն ցած կամարներ վրադ կը ճնշեն եւ մանաւանդ վարդանանց պատերազմէն տեսարան մը, մարմիններու, ղէնքերու, զլուխներու եւ բազուկներու խառնուրդ մը, սեւ միագոյն վանդակաւ ոյժ մ'ունին եւ սարսափ կ'ազդեն:

Օսանդուղին վերեւ պատերու վրայ դարձեալ միագոյն պատկերներ, Ս. Մեսրոպի, Խորենացիի, Շիրակացիի, կարծես դարձնոցի մը աշխատաւորներն ըլլան՝ իրենց Տորք Անդեղեան բազուկներով: Պէտք չէ՞ր հասուն եւ տաղանդաւոր նկարիչի մը յանձնել հայ միտքը անմահացնելու, քան յանձնուիլ աշակերտի մը անհասարկ երեւակայութեան:

Կը բարձրանանք վերի յարկը. երկու ընթերցասրահներ եւ մէջտեղը բաւական մեծ դահլիճ մը, ուր ցուցադրուած են մեր ձեռագրական գանձերը: Այս դահլիճն է ամէնէն դրաւիչ մասը եւ օտար ու հայ այցելուն պիտի զմայլի հայ մանրանկարչական արուեստի կատարելութեան վրայ: Հոն նմոյշներ ունին Ռոսլին, Սարգիս Պիծակ, Մկրտիչ Նազաշ, Թորոս Տաւրոսցիին եւ ուրիշներ, մասնաւոր դարակներու մէջ ցուցադրուած: Բանասէրները քեզի հաճոյքով պիտի բացատրեն ամէն մանրամասնութիւն. անոնց զեղարուեստը, դարերը, դոյններու ճոխութիւնը, նրբօրէն աշխատուած կողմերը:

Մատենադարանը բանասէրներուն տա-

ճարն է, ուր տարեց եւ երիտասարդ տիկիներ, օրիորդներ կը զբաղին բանասիրութեամբ, լուրջ եռանդով լծուած՝ լուսարաններու եւ հրատարակելու մեր հին գանձերը:

Ոչ միայն գրական վարչութիւն մ'ունին, որուն պետն է գիտնական Պ. Լեւոն Խաչիկեան, այլ տեսակ մը ընտանիք կազմած են եւ կուսակցութիւնն իր ընթերցող կը հսկէ՝ լաւագոյն արդիւնքներու հասնելու համար:

Վարժարանի մը պէս իրենց աշխատանքի ժամերն ունին, առաւօտեան 9-ին մինչեւ ժամը 3-30. երեւոյթը պետական պաշտօնատան մը կը նմանի, բայց անոնք իրենց հոգիին եւ եռանդին պաշտօնեայ են:

Մատենադարանը ձեռագիրներ լուսանկարելու գործիքով օժտուած է, իսկ անոր վրայ աշխատող օրիորդը չեքոսլաւ է: Այժմ պատրաստեր են գետնայարկ չորս սենեակներ, երկաթէ դարակներով եւ ժայռի մէջ փորուած, Միասնիկեան մատենադարանէն հոն փոխադրելու պետական ամբողջ հաւաքածոն:

Գիշեր ցերեկ օստիկանութիւնը կը հսկէ այս գանձերուն՝ անախորժ դէպքերու առջեւն առնելու համար. շատ խելացի կարգադրութիւն է:

Մատենադարանէն ոչ շատ հեռու, Վ. Տէրեանի փողոցին վրայ կը գտնուի բաւական մեծ, մոխրագոյն պալատ մը. Միասնիկեան գրադարանն է: Մուտքին՝ դարձեալ օստիկան մը եւ անբախտ Միասնիկեանի նկարը: Քանի մը աստիճաններ միջին յարկը կը տանին, նեղ դաւիթ մը. հոն երկու հոգի իրարու մօտ նստած են. դաճէ ոսկեղօտ արձաններ են, Լենին եւ Ստալին: Հայաստանի մէջ աւելի Ստալինի արձան կայ՝ քան Վրաստանի մէջ: Սովորական յաճախորդները աննկատ կ'անցնին, սակայն օտարական այցելուի մը վրայ տարօրինակ տպաւորութիւն կը ձգեն:

Աւելի վեր բարձրանալով՝ այցելուն կը մտնէ փոքրիկ սենեակներ, ուր գիտնականներ կ'աշխատին, օրիորդներ զբաղած

են ձեռագրական զարդերը հաւատարմօրէն օրինակելու. ասոնց ճարտար մատենաբուն արդիւնք են Հայաստանի եւ վերջերս Ֆրանսայի մէջ Ունեսքոյի բարերարութեամբ տպագրուած երկու ալպոմները:

Սրահակին խորը կարմիր պատտուի վրայ դրուած էր Լենինեան ուղիով միշտ դէպի յաղթանակ: Ինչո՞ւ հայ մատենագրանի մը ճակատին դրուած չըլլար Խորենացիին նշանաւոր խօսքը՝ Թէպէտ ածու փոքր եմք, բայց եւ ի միջի մերում գտանին քաղու գործք արուքեան: Համայնավար երկիրներուն ամէնէն փոքր հոգի տէր ազգն է, իր կողերէն շատ միս հաներ եւ ուրիշներուն տուեր են. սակայն ամէնէն հին քաղաքակրթութեան տէր, իր հողը թանգարան մ'է, իր գրական, ճարտարապետական եւ գեղարուեստական անցեալն ու ներկան միջազգային համբաւ ունին:

Հաստ բանալիներով փակ սենեակ մը կը բացուի. ձեռագիրներու առժամեայ վայրըն է. պաշտօնեան Պ. Օննիկ Եկանեան, պարօկահայ, իսկական նուիրեալ աշխատող եւ հաւատարիմ պահակ, ցոյց տուաւ հսկայ հաւաքածոն. պատին վրայ դրուած էր 9663 հայերէն ձեռագիր եւ 600 օտար լեզուներով: Լաւ դասաւորուած են թէպէտ տակաւին չեն ցուցակադրուած: Երեւան հարստացած է, ոչ միայն ժողովուրդով էջմիածնի ճօխ հաւաքածոն, այլ նաեւ բովանդակ Ռուսիոյ մէջ ցրուած ձեռագիրները, մասնաւորապէս Լաւրեան ձեռարանի հաւաքածոն՝ իր թանկագին Աւետարանով: Թիֆլիզի վրացական մատենադարանը ունի շուրջ 250 հայ ձեռագիրներ, որոնց տեղը Երեւանն է, բայց եզրայրական Վրաստանը նախանձախնդիր է:

Միասնիկեան գրադարանը ամէնէն պաշտօնականն է Երեւանի մէջ, տեսակ մը շտեմարան հայ տպագրութեան, ուր կը պահուին մեր հին ու նոր գրականութեան հատորները: Ունի օրիորդներու, տիկիներու հոծ պաշտօնէութիւն, որոնք կը ստանան, կը դասաւորեն եւ կը ցանկեն: Հայկական բաժնի հին տպագրու-

Թիւններու մէջ զԺՈՒՄը է հաւասարին Վենետիկի կամ Վիեննայի հաւաքածոններուն. տակաւին հարիւրաւոր զըքեր կը պակսին՝ նոյնիսկ վենետիկեան տպագրութիւններէն: Կը յուսան կամաց կամաց ճոխացնել նուէրներով եւ փոխանակութեամբ: Իրենց տրամադրութեան տակն են արտասահմանեան հեղինակներու անտիպ դիւանները, որոնք աւագ կարեւորութիւն ունին նոր ուսումնասիրութիւններու համար:

Սակայն Երեւանի մէջ կան տակաւին բազմաթիւ գրադարաններ. դրեթէ ամէն խմբակ իր գրադարանն ունի. անշուշտ մեծ մասով համայնալար տպագրութիւններ են:

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՆ

Ես չեմ տեսած Լենինկրատի Երմիթաժ Թանգարանը, բայց գիտեմ թէ աշխարհահռչակ է. կը խորհիմ թէ երկրորդ տեղը, երկաթէ վարագոյրէն անդին, Հայաստանի Թանգարանը կը բռնէ: Այցելեցի Թիֆլիզի պետական Թանգարանը, ուր տեսայ վրացի Էրիսթաւներու եւ տէտէպալներու հին տարազներ, պատերուն վըրայ լուսանկարներ, բայց ոչինչ իրրեւ հնութիւն:

Երեւանի Լենինեան հրապարակին վըրայ, ցածկեկ շէնք մը կայ, կամարակապով եւ զեղնագոյն. Թանգարանն է: Իր առջեւը բարձրաթիւ շատրուն մը կայ, լայն աւազանի մէջ հոսուն: Լայն դուռ մը քանի մը աստիճաններով իսկոյն կը մտնէ Թանգարանը. դրան մօտ դարձեալ ոստիկան մը: Դիմացը ուրաքտական երկու հին զինուորական կառքեր, տախտակէ

անիւներով, Սեւանէն հոս բերուած են՝ երբ կղզիին քարայրները լոյսին եկան:

Դարակներու մէջ շարուած են հնադարեան առարկաներ, Հայաստանի դանազան տեղերէն հաւաքուած. մասնաւորապէս Դուրինի եւ Կարմիր բլուրի պեղումներէն:

Ուրիշ սրահ մը կը պարունակէ Թանկադին եւ նուրբ արուեստով փորագրուած բազմաթիւ խաչքարեր: Հոս է Մուշի Առաքելոց վանքին փայտեայ դուռը: Ի՜նչ զարմանալի ժողովուրդ. ջարդի եւ փախուստի ահաւոր օրերուն՝ շալակով Հայաստան փոխադրել դուռ եւ ձեռագիր. ո՞ր ազգն ունի այսպիսի դաւաճներ, որ կեանքի հաւասար կը նկատեն ազգային հարստութիւնը: Անոնք բերած են նաեւ շուրջ 500 ձեռագիրներ, որոնց մէջն էր Մուշի հակայ եւ Թանկադին Տօնակաճը:

Երկրորդ յարկը յատկացուած է ազգային հին ու նոր տարազներու: Պ. Կարոյ Ղաֆաղարեան, տնօրէն Թանգարանի, շատ հմուտ իր պաշտօնին մէջ, ձեզից ցոյց պիտի տայ այդ ասղնեղործ նուրբ տարազները՝ հաւաքուած Հայաստանի զանազան շրջաններէն, նոյնիսկ Արաքսի աջ ափերէն: Հոն կան անական դործիքներ, աշխատանքի առարկաներ: Սիւնիք ու Ախալցխա, Վասպուրական եւ Բարձր Հայք ներկայ են իրենց ուրոյն արտադրութիւններով, ոսկերչական աշխատանքներով, որոնք որ եւ է Թանգարանի մը պատիւ կը բերեն:

Ունենալ ճոխ Թանգարան մը՝ փառք ու պատիւ է ազգի մը, որ կու գայ մասնակցելու մարդկութեան մտաւորական յաղթանակներուն:

(Շարունակելի)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԻ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ՊՅՆՈՍԵԱՆ ԽԱՅԻԿ. - Վէպեր եւ կերպարներ: Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 249 (փոքրագիր):

ՏՐԲԱՇԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ. - Գրականութեան տեսութիւն: Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 518:

ՌԵՏՈՒՆԻ ՀԵԿՏՈՐ. - Դանիէլ Վարուժան: Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 288:

ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԼՈՒԻՉԱ. - Աղամեանը եւ Շէքսպիրի կերպարները: Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 371:

ՎԵՏՈՒՆԻ ԱՉԱՏ. - Երկեր: Հատոր երկրորդ: Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 286:

ՏԷՐ-ՍԻՄՈՆԵԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ. - Յօդուածներ: Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 276:

ՕՏԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ. - Երկերի ժողովածու: Հատոր երրորդ: Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 499:

* * *

ԱԹՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ. - Գողթաշխարհի երգեր (Քերթումներ 1956-1961): Փարիզ, տպ. Արաքս, 1961, էջ 142:

ԱԼՊՈՅԱՆ ԱՐՇԱԿ. - Պատմութիւն Մալաթիոյ Հայոց - տեղագրական, պատմական եւ ազգագրական: Պէյրութ, տպ. Սեւան, 1961, էջ ԼԱ+1536:

ԱՃԷՄԵԱՆ ՀԱՅԿ. - Յիշատակարան եւ պատկերացոյց Թեհրանի Հայոց «Իսրայէլ Սահակեան» ազգ. տարրական եւ միջնակարգ դպրոցների: Թեհրան, տպ. Նայիրի, 1961, էջ 35:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱՌ. - Քերթումներ (1945-1960): Գահրէ, տպ. Յուսարեք, 1961, էջ 254:

ԱՍԹՐԱՃԵԱՆ ՏՈՔԹ. Գ. - Ընդարձակ, ընդհանուր Արարական Պատմութիւն (2500 Ն. Ք.-1918 Յ. Ք.): Պէյրութ, տպ. Սեւան, 1961, էջ 579:

ԲԱՔԳԷՆ ԱԹՈՒԱԿԻՅ ԿԹՂ. - Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի Հայոց: Անթիլիաս, տպ. Կթղ. Հայոց, 1961, էջ Ը+1494 սիւն, մեծագիր: Հայկ. Մանչ. Գալուստ Կիւլչեկեան Հիմնադրութեան:

ԲԱՐՈՒՆԵԱՆ ՎԱՀՐԱՄ. - Անդարձ ճամբայ (Պատմութիւն): Իսթանպուլ, 1961, էջ 95:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՇՈՏ. - Հայ գէմքեր (աշխարհայեացքների ընտրութիւններ): Թեհրան, տպ. Մոգերն, 1961, էջ 249:

ԳՐԻԳՈՐ. - Քանի մը մտքեր: Փարիզ, տպ. Արաքս, 1961, էջ 76:

ԷԼԼԷՆ ԲԻԻՉԱՆԴ. - Երկերի ժողովածու: Թեհրան, տպ. Մոգերն, 1961, էջ 427:

ԹԵՐԱՇԵԱՆ ՍՈԿՐԱՏ Յ. (Ս. Կոսմ) - Սլաքներ եւ գէմքեր: Ա. հատոր: Պուլճոս Այրէս, տպ. Արաքս, 1961, էջ 188:

ՄԻՐԹԱՐ ՍՈԿՐԱՏ Մ. - Կեանքի պատկերներ եւ խիղ ու խրատ: Պէյրութ, տպ. Սեւան, 1961, էջ 438:

ՆԱՋԱՐԵԱՆ ՀԱՅԿ. - Էջմիածին - Թատերախաղ. (անգլիերէն ընդգրկեց Թարգմանեց Յովիկ Ա. Ալլահիզլըեան): Թեհրան, տպ. Մոգերն, 1961, էջ 51:

ՇԱՀԻՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ. - Համաստեղ (Մենադրութիւն): Պէյրութ, տպ. Մշակ, 1961, էջ 189:

ՇԻՏԱՆԵԱՆ ԱՐՄԷՆ. - Թափառական հայու որդին (Բ. տպագրութիւն): Պէյրութ, տպ. Տօնիկեան, 1961, էջ 264:

ՈՐԲԵՐԵԱՆ ՋԱՐԵՀ Վ. - Ուրֆայի վերջին օրերը 1915ին (Դիւցազներգութիւն): Պէյրութ, տպ. Ատլաս, 1961, էջ 86:

ՋԱՐԱՌՈՒՏԵԱՆ ՆՈՒՊԱՐ. - Արդարներուն ոճերը (Վէպ): Պէյրութ, տպ. Արաքս, 1961, էջ 202:

ՉՕՐՊԱՃԵԱՆ Տ. Յ. - Մնուկի պատգամ: Պէյրութ, 1961, էջ 16 (փոքրագիր):

ՊԱՅԼՐԵԱՆ ՅԱԿՈԲ Հ. - Զայնադրուած խմբերգներ եւ մեներգեր: Աթէնք, 1961, էջ 24:

ՊԱՐՈՆԵԱՆ ՅԱԿՈԲ. - Մեծապատիւ մուրացիկները - Քաղաքալարութեան վնասները - Առանին տեսարաններ եւ Պաղտասար Աղբար: Իսթանպուլ, Հրատ. Արամեան Սանուց Միութեան, մատենաշար թ. 5: Իսթանպուլ, տպ. Վարու, 1961, էջ 413:

ՍԱՐԱՃԵԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՐՔ. - Հաճըն (հրատ. Արիստոյ Խրիմեան): Պուլճոս Այրէս, տպ. Արաքս, 1961, էջ 64:

ՍԱՐՀԱԴԵԱՆ ՍԻՐԱՔ. - Կեանքիս յուշերից: Թեհրան, տպ. Նայիրի, 1961, էջ 354:

ՍԵԻԱԿ ՄԱՆԱՍԷ Կ. - Առաքելութիւն մը ի Հայաստան: Նիւ Եորք, տպ. Նոր աշխարհ, 1961, էջ 160:

ՏԱՐՈՆԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ. - Բաղէշի նահանգի Խուլթիկի զինդի բարբառը: Անթիլիաս, տպ. Կթղ. Հայոց, 1961, էջ 193:

ՏՕՆՃՈՅԵՆՅ ԱՐՏԱՇԷՍ. - Տարօնարոյր (Հատընտիր գրութիւններ): Պէյրութ, տպ. Սեւան, 1961, էջ 160:

ՐԱԲԻՆԴԱՆԱԹ ԹԱԳՈՐ. - Գիտանքալի (անգլ. ընդգրկեց Թրդմ. Ա. Թ. Ալլահիզլըեան): Թեհրան, տպ. Մոգերն, 1961, էջ 64:

ՓԷՇԻՄԱՄԼԱՃԵԱՆ ՀՐԱՆԴ. - Հրապարակային նիւթական եւ բարոյական համարադրութիւն, 1933-1949: Իսթանպուլ, տպ. Վարու, 1961, էջ 63:

ՔԷՇԻՇԵԱՆ ԱԼԻՍ. - Ժամանակը՝ մատը բերնին: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1961, էջ 97:

ՔԷՇԻՇԵԱՆ ԱԼԻՍ. - Շարագրութիւններ: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1961, էջ 107:

ՖԱԼԵԱՆ ՀՐ. - Նոր աշքեր (Պատմութիւնների ժողովածու): Հատոր Ա: Թեհրան, տպ. Մոգերն, 1961, էջ 312:

ՖԷՐՀԱԹԵԱՆ Հ. ԲԱՐՍԵՂ. - Կեանք մը նուիրուած Աստուծոյ եւ Ազգին: Վիեննա, Միթիթ, տպ. 1961, էջ 24: